



**ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

13 հունիսի 2012թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արթուր Սաքունցի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Արթուր Սաքունցը 2012 թվականի մայիսի 25-ին դիմել է ՆՆ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 4-րդ, 30-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ընտրական օրենսգրքի 57-րդ, 90-րդ, 124-րդ եւ 164-րդ հոդվածները (այնքանով, որքանով չեն նախատեսում քվեաթերթիկում «Բոլորին դեմ եմ» փողի առկայությունը)»:

Դիմողը գտնում է, որ ՆՆ Սահմանադրության 4-րդ հոդվածը նախատեսել է բոլոր ընտրողների համար ընտրություններին հավասար հիմունքներով մասնակցելու հնարավորություն: Սակայն վիճարկվող նորմերի առկայությունը խոչընդոտում է ընտրություններին մասնակցել այն ընտրագանգվածին, որը դեմ է առաջադրված բոլոր թեկնածուներին: Ըստ դիմողի՝ հիշյալ ընտրագանգվածն ուղղակի կորցնում է իր ընտրական իրավունքը, քանի որ հնարավորություն չունի դեմ արտահայտվելու բոլոր թեկնածուներին, նրան ուղղակի մնում է քվեաթերթիկի վրա խաչ քաշելու միջոցով արտահայտել իր կամքը, որը հետագայում անվավեր է ճանաչվում եւ որով խախտվում են ՆՆ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված հավասարության եւ ուղղակի ընտրության սկզբունքները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1. ՆՆ ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-10-րդ մասերի դրույթները, կարծում ենք, չեն կիրառվել դիմողի նկատմամբ:

ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածը «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Նիշյալ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Ի թիվս այլ պայմանների, սահմանվել է, որ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է վիճարկվող օրենքի դրույթը:**

ՆՆ սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

2. Դիմողը ՆՆ ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի դրույթների հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը

մատնանշելով, ինչը տվյալ դեպքում չի կարող հանդիսանալ սահմանադրական դատարանում գործի քննության առարկա:

Օրենսդրական բացը, որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասություններին եւ վերջիններս դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում, ամրագրել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Ջարգացնելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

3. ՆՏ ընտրական օրենսգրքի **90-րդ եւ 164-րդ հոդվածների** դրույթների մասով, կարծում ենք, որ եթե անգամ դրանք հիշատակված լինեին դիմումին կից ներկայացված ՆՏ վարչական դատարանի 2012 թվականի մայիսի 4-ի որոշման մեջ, միեւնույն է, հնարավոր չէր դրանք դիտարկել «վիճարկվող դրույթի կիրառում» եզրույթի ներքո, քանի որ սահմանադրական դատարանի մեջ «վիճարկվող դրույթի կիրառում» եզրույթը ենթադրում է դիմողի նկատմամբ վերջինիս կիրառման հետեւանքով անմիջական իրավական հետեւանքների առաջացման անհրաժեշտություն: Այս կապակցությամբ ՆՏ սահմանադրական դատարանն իր իրավական դիր-

քորոշումներն է արտահայտել 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ՝ առ այն, որ «...«կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ»:

Բացի դրանից, վերոհիշյալ հոդվածների դրույթների հակասահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ավելի շարք հետապնդել է վերացական վերահսկողությանը բնորոշ նպատակներ: Այսպես, սահմանադրական կոնկրետ վերահսկողության նպատակն է ապահովել **անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը**, երբ դրանք խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում: Մինչդեռ վերացական վերահսկողությունը ենթադրում է, որ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը կարող է օրենքով նախատեսված իրավասու անձի կողմից բարձրացվել՝ **անկախ որեւէ կոնկրետ գործի քննությունից**: Այսպես գլխավոր շեշտադրումը կատարվում է կանխարգելիչ բնույթ ունեցող միջոցառումների վրա, երբ դեռևս խախտված չեն մարդու սահմանադրական իրավունքները, բայց առկա է դրանց խախտման պոտենցիալ վտանգ: Ներկայումս, այս համատեքստում եւս, կարծում ենք, որ դիմողը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

4. ՆՃ ընտրական օրենսգրքի 124-րդ հոդվածի դրույթների մասով, կարծում ենք, դիմումն ակնհայտ անհիմն է եւ բարձրացնում է կիրառման իրավաչափության հարց: Այսպես.

Դիմողը, վիճարկելով վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը, որեւէ կերպ չի անդրադարձել դրանց սահմանադրաիրավական բովանդակությանը, չի ներկայացրել որեւէ իրավական հիմնավորում դրա հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհարական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Ավելին, ՆՃ սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, որի համա-

ձայն՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել: Խնդրո առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձեւակերպված հիմնավորումներ:

Բացի դրանից, դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտի օրինականության հարց: Նամաձայն ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

5. Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաեւ պետական փուրքի վճարման հարցին:

Դիմողը որպես պետական փուրքի վճարման անդորրագիր ՆՏ սահմանադրական դատարան է ներկայացրել «ՆԶԱ Վանաձորի գրասենյակ» ՆԿ-ի կողմից քսան հազար դրամ վճարելու վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 6490 վճարման հանձնարարագիրը: Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով, դիմողը պարտավոր էր սահմանադրական դատարան ներկայացնել բազային պետական փուրքի հնգապատիկի չափով պետական փուրք վճարելու վերաբերյալ անդորրագիր կամ միջնորդություն՝ պետական փուրքի վճարումից ազատելու մասին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Արթուր Սաքունցի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:



13 հունիսի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-15